Նախագիծ-Առաջարկ Գրելու Ուղեցույց

Ջինիշյան հիշատակի հիմնադրամին (ՋՀՀ) ներկայացվող նախագիծ-առաջարկները պետք է կազմված լինեն ստորև ներկայացված ուղեցույցին համապատասխան: Խնդրում ենք **չշեղվել ուղեցույցի ձևաչափից և չգերազանցել յուրաքանչյուր բաժնի համար նշված էջերի քանակը**: Անհրաժեշտության դեպքում Ձեր կազմակերպության և նախագիծ-առաջարկի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք գրել հավելվածում: Նախագիծ-առաջարկի յուրաքանչյուր բաժնի նկարագրությունը բերված է սույն փաստաթղթում սկսած երրորդ էջից:

Նախագիծ-առաարկները ներկայացնել 1 (մեկ) ընդհանուր փաթեթով, որի մեջ կներառվեն նախագծի տպագիր և էլեկտրոնային տարբերակները, ինչպես նաև պահանջվող հարակից բոլոր փաստաթղթերը:

Բաժին	Էջերի առավելագույն քանակը
Տիտղոսաթերթ	1 էջ
I. Գործադիր ամփոփում	1 էջ
II. Հիմնախնդրի ձևակերպում, հիմնախնդրի հիմնավորում	1 էջ
III. Նախագիծ-առաջարկի նկարագրություն	3 էջ
IV. Բյուջե	2 էջ
V. Տեղեկատվություն կազմակերպության վերաբերյալ	1 էջ
VI. Հավելվածներ	անսահմանափակ

Տիտղոսաթերթ (1 էջ)

Դիմորդ համայնքի/կազմակերպության անունը			
Անվանման հապավումը (եթե առկա է)			
Ծրագրի անվանումը			
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)	/2016 թ /20 17 թ	Ծրագրի տևողությունը	_____ ամիս
Ծրագրի իրականացման վայրը (համայնք, մարզ)		գ._____, Գեղարքունիքի մարզ	
Համայնքի ղեկավարը	Անուն ազգանուն		
	Հեռ		
	Email		
Ծրագրի ղեկավարը/համակարգողը	Անուն ազգանուն		
	Հեռ		
	Email		
Դիմորդ կազմակերպության գործունեության տվյալներ	Հասցե		
	Հեռ		
	Email		
Շահառուների նկարագրություն և քանակ			
Ծրագրի ազդեցությունը			
Ջինիշյան Հիշատակի Հիմնադրամի ներդրում՝ Դրամաշնորհ			ՀՀ դրամ
Վորլդ Վիժն Հայաստան			ՀՀ դրամ
Ծրագիրն իրականացնող կողմի՝ համայնքի ներդրումը.	Ֆինանսական		ՀՀ դրամ
	Նյութեր և աշխատուժ		ՀՀ դրամ
	Ընդամենը		ՀՀ դրամ
Այլ ներդրում համայնքից			
Համաներդրում այլ աղբյուրներից	Ֆինանսական		ՀՀ դրամ
	Նյութերի տեսքով		ՀՀ դրամ
Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ ՀՀ դրամով			ՀՀ դրամ

Կազմակերպության/համայնքի ղեկավար՝ _____

Անուն ազգանուն, ստորագրություն

Ծրագրի ղեկավար _____

Անուն ազգանուն, ստորագրություն

Ամսաթիվ՝ _____

Կնիք

I. Գործադիր ամփոփում (առավելագույնը մեկ էջ)

Ներառելով հիմնական տեղեկությունները տվեք համառոտ նկարագիրը այն ամենի, ինչը պարունակելու է ձեր նախագիծ-առաջարկը: Հիշեք, որ այս փաստաթուղթը կարող է հանդիսանալ ձեր նախագիծ-առաջարկի հաջողության գրավականը:

Ընդգրկել հետևյալ տեղեկությունները.

- **Հիմնախնդիր** (մեկ-երկու պարբերություն)
  - Հիմնական խնդրի կամ պատճառ հանդիսացող կարիքի համառոտ ձևակերպումը, որին անդրադառնում է և որի լուծմանը պատրաստ է ձեռնամուխ լինել ձեր կազմակերպությունը:
- **Նպատակ** (մեկ պարբերություն)
  - այն հիմնական դրական փոփոխությունը, որին նպաստում է ծրագիրը
- **Խնդիրներ**
  - այն ենթանպատակներն են, որոնց լուծման միջոցով կարելի է հասնել Նպատակին
- **Լուծում** (մեկ-երկու պարբերություն)
  - Նախագիծ-առաջարկի համառոտ նկարագիրը (ներառելով այն գործունեությունների նկարագրությունը, որը պետք է իրականացվեն), շահառուների թիվը, ինչպես և որտեղ այն պետք է իրականացվի, ինչ ժամանակահատվածում և անհրաժեշտ աշխատակազմը:
- **Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ** (մեկ պարբերություն)
  - Բացատրեք թե ինչպես եք օգտագործելու նախագիծ-առաջարկի իրականացման համար անհրաժեշտ դրամաշնորհի գումարը:
  - ներդրումներ
  - ֆինանսական հոսքեր
- **Կազմակերպությունը և աշխատանքային փորձը** (մեկ պարբերություն)
  - Համառոտ տեղեկատվություն համայնքի/կազմակերպության մասին՝ անվանումը, պատմությունը, նպատակը և գործունեությունները՝ շեշտը դնելով ծրագրի իրականացմանը անհրաժեշտ Համայնքի և կազմակերպության կարողությունների համառոտ նկարագրության վրա:

II. Հիմնախնդրի ձևակերպում, հիմնախնդրի հիմնավորում (մեկ էջ)

Հիմնախնդրի ներկայացման պարզությունը և հստակությունը հնարավորություն կտա հասկանալու այն խնդիրները, որին ցանկանում է անդրադառնալ ձեր համայնքը: Այս բաժնում ՄԻ ԱՌԱՋԱՐԿԵՔ ձեր նախագիծ-առաջարկով նախատեսվող խնդիրների լուծումները: Ուղղակի նշեք խնդիրը և ներկայացրեք փաստեր, որոնք կօգնեն հասկանալու ձեր նախագծի իրականացման անհրաժեշտությունը: Հիմնախնդրը հիմնավորող փաստերը կարող են լինել պաշտոնական աղբյուրներից վերցված վիճակագրական տվյալներ, կառավարության կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված հետազոտություններ և զեկույցներ, ՀՀԽ-ի կատարած հետազոտությունները, կարքի վերլուծությունները: Հիմանխնդիրը եթե կրում է երկարաժամկետ բնույթ պետք է, որ իր արտացոլումը գտած լինի համայնքի ռազմավարական պլանի և/կամ համայնքային ձեր կազմակերպության մեկամյա գործունեությունների պլանի մեջ: Այս բաժնով տրամադրված տեղեկությունները, փաստարկները պետք վերաբերվեն հիմնախնդրին, լինեն հավաստի և համոզիչ: Հակիրճ նկարագրեք թե ինչու՞ է անհրաժեշտ նախագիծ-առաջարկի իրականացումը: Անկախ հետազոտությունների արդյունքներ, տպագիր նյութեր կարող եք տրամադրել հավելվածի տեսքով:

Այս բաժինը պետք է լինի համոզիչ, ճշգրիտ, տրամաբանական: Այն պետք է հավաստիացնի, որ դուք հստակ պատկերացնում եք խնդիրը և պատրաստ եք առաջարկել լուծումներ: Ձեր փաստարկները բերելիս ուշադրություն դարձրեք հետևյալ կետերին.

- Ներկայացրեք անմիջապես ձեր նախագիծ-առաջարկին վերաբերող վիճակագրական տվյալներ:
- Եղեք ստույգ բնորոշելիս այն մարդկանց խումբը, որոնց վրա ազդեցություն է գործում տվյալ խնդիրը:

- Բացատրեք խնդրի հրատապությունը:
- Նկարագրեք ոչինչ չանելու հնարավոր հետևանքները:
- Հնարավորության սահմաններում հիմնավորեք, որ քաջատեղյակ եք խնդրին և ունեք բավարար տեղեկատվություն նրա շուրջ արդեն իսկ աշխատող կազմակերպությունների մասին:

Նկարագրեք և հիմնավորեք թե կարիքի բացահայտման և նախագիծ առաջարկության մշակման համար ի՞նչ մասնակցային մեթոդներ և գործառույթներ են օգտագործվել ձեր համայնքում (կից ներկայացնել հիմնավորող փաստաթղթերը):

III. Նախագիծ-առաջարկի նկարագրություն (առավելագույնը 3 էջ)

Նախագիծ-առաջարկի այս բաժինը պետք է ունենա 7 ենթաբաժիններ՝ **Նպատակ, խնդիրներ, Մեթոդներ, Սպասվելիք արդյունքներ, Ղեկավարում և կառավարում, Վերահսկողություն և Գնահատում, Շարունակականություն**: Հիմնախնդիրները և մեթոդները միասին թելադրում են աշխատակազմի և կառավարման հետ կապված կարիքները և հանդիսանում են ուղեցույց ծրագիրը վերահսկելու և արդյունքները գնահատելու համար: Նախագիծ-առաջարկի շարունակականությունը անմիջականորեն կապված է նրա հաջող ընթացքից և ավարտից: Հաջողության դեպքում նոր աղբյուրներից աջակցություն ակնկալելու հնարավորություն է ստեղծվում:

Բոլոր յոթ ենթամասերը միասին պետք է ներկայացնեն ծրագրի ամբողջական պատկերը և ամփոփ ձևով պատմեն ծրագրի կողմից հետապնդվող նպատակների ու նրանց հասնելու ուղիների մասին:

Ա) Նպատակ (մեկ պարբերություն)

Նախագիծ-առաջարկով ակնկալվող ընդհանուր արդյունքը: Ո՞րն է նախագծով հետապնդվող հիմնական սպասվելիք արդյունքը,

Բ) ԵՆԹԱՆՊԱՏԱԿՆԵՐ (Objectives)

Նախագիծ-առաջարկի խնդիրները պետք է լինեն տրամաբանորեն իրար հաջորդող ենթանպատակներ, որոնց իրականացման դեպքում հնարավոր է հասնել նախագիծ-առաջարկի նպատակին (նկարագրված նախորդ բաժնում): Խնդիրները պետք է լինեն **իրատեսական, հստակ, կոնկրետ, չափելի և իրագործելի:**

Խնդիրները նշելիս եղեք իրատես: Մի խոստացեք այն, ինչ չեք կարող իրականացնել:

Հիշեք, որ նախագիծ-առաջարկի ֆինանսավորման դեպքում, ծրագրի արդյունքների գնահատումը կկատարվի ծրագրում նշված խնդիրների հիման վրա:

Հակիրճ ներկայացրեք յուրաքանչյուր խնդիրը (ցանկալի է մեկ նախադասությամբ): Խորհուրդ է տրվում համարակագել կամ հստակ տարանջատել խնդիրները՝ տեքստում ապահովելով նրանց ընգծուն լինելը:

Գ. Մեթոդները

Ի՞նչ առանցքային գործողություններ են կատարվելու ձեր ծրագրի ընթացքում, ինչպե՞ս, ո՞վ, ե՞րբ, ի՞նչ, ինչո՞վ….

Այս բաժնում դուք պետք է նկարագրեք, թե ինչպես եք իրականացնելու նախագիծ-առաջարկը: Այն պետք է հավաստիացնի, որ ձեր համայնքը և մասնավորապես ձեր կազմակերպությունը լավ է պատկերացնում իր գործունեությունները և քայլերը, **ինչը և վստահություն կառաջացնի** ձեր համայնքի հանդեպ: Նախագիծ-առաջարկի իրականացման ձեր մեթոդները պետք է համապատասխանեն նախորդ բաժնում նշված խնդիրներին և թվարկեն որոշակի գործողություններ, որոնց միջոցով հնարավոր կլինի քայլ առ քայլ լուծել ծրագրի բոլոր խնդիրները:

Այս բաժնին ծանոթանալուց Շնորհատուն պետք է կարողանա ստանալ պատասխաններ հետևյալ հարցերին՝

Ի՞նչ առանցքային գործողություններ են կատարվելու ձեր ծրագրի ընթացքում

Ինչպե՞ս եք իրականացնելու խնդիրները և հասնելու նախագիծ-առաջարկի նպատակին՝ նկարագրեք իրականացվելիք գործողությունների տրամաբանական շարքը: Սա հնարավորություն կտա պատկերացնելու թե ի՞նչ է տեղի ունենալու նախագծի իրականացման սկզբից մինչև նրա ավարտը, մինչև ծրագրի նպատակին հասնելը:

Ո՞վ է իրականացնելու ծրագիրը: Եթե դուք համագործակցելու եք որևէ կազմակերպության, կամ համայնքի հետ, ապա հստակ նշեք ձեր և նրանց անելիքները:

Ե՞րբ եք իրականացնելու նախատեսվող գործունեությունները (activities): Ի հավելումն գրավոր նկարագրության, լրացրեք նախագիծ-առաջարկի Իրականացման Ժամանակացույցը՝ համաձայն ներկայացված ձևի:

Ի՞նչ նյութեր, սարքավորումներ են անհրաժեշտ նախագիծ-առաջարկը իր ավարտին հասցնելու համար:

Ի՞նչով է պայմանավորված ձեր ընտրած գործունեությունների արդյունավետությունը նախագիծ-առաջարկում ներկայացված խնդրի լուծման համար: Ցանկության դեպքում կարող եք օրինակ բերել նմանատիպ մեթոդներով և գործունեություններով հաջողված այլ նմանատիպ ծրագրեր:

Դ. Շահառուներ, Սպասվելիք Արդյունքներ և Ազդեցություն

Շահառուներ

Նկարագրեք շահառուների խումբը՝

- ձևակերպեք թե ովքեր են նրանք,
- ներկայացրեք շահառուների սոցիալական կարգավիճակը,
- նկարագրեք նրանց դերը և ազեցությունը համայնքում,
- ներկայացրեք նրանց քանակը բացարձակ թվերով կամ %-ային համեմատություն արեք հայտնի այլ տվյալների հետ:

Արդյունքներ

Նկարագրեք նախագծ-առաջարկով ներկայացված խնդիրների և գործողությունների իրականացումից սպասվելիք արդյունքները և/կամ հետևանքները, որոնք պետք է լինեն չափելի և/կամ ստուգելի (համամատական):

Նկարագրեք նաև թե.

Ազդեցություն

- Ինչպիսի՞ն է սոցիալական իրավիճակի փոփոխության հավանականությունը կապված քննարկվող ծրագրի հետ:
- Ինչպես ծրագիը կազդի մարդկանց մոտ ձևավորված սոցիալական ակտիվության վարքագծի, սոցիալական կապերի, համայնքի նկատմամբ վստահության և համայնքին պատկանալու ու տեր կանգնելու մտածելակերպի փոփոխությունների վրա:

Ե. Կառավարում և Ղեկավարում

Լրացրեք Աշխատակազմի Աղյուսակը (կից ներկայացված նմուշին համապատասխան), որտեղ պետք է նշեք ծրագրում անմիջական մասնակցություն ունեցող անդամների

1. Անունները,
2. Մասնագիտական որակավորումները,
3. Անձի ստանձնած պարտականությունները Ծրագրի ընթացքում
4. Լրիվ կամ կես աշխատանքային օր աշխատելը:
5. Նկարագրեք, թե ովքեր են ղեկավարելու նախագիծ-առաջարկի իրականացումը և պատասխանատու լինելու ծրագրի հաջողության համար:
6. Ներկայացրեք, ով է ղեկավարելու ծրագրի հաշվապահական մասը, հաշվետվությունների մասը:

Առանձին ներկայացրեք Ծրագրի կառավարման պլանը՝ ովքեր, ինչ գրաֆիկներով, ինչպես և ինչն են կառավարելու,: Ծրագրի կառավարման պլանի մեջ պետք է նախատեսվեն նաև Ծրագրի իրականացման ընթացքում համայնքային իրազեկման, թափանցիկության և հանրային մասնակցության գործառույթներ, մասնավորապես ծրագրի բյուջեի և կատարվող ծախսերի մասով:

Զ. Վերահսկողություն և Գնահատում

Նկարագրեք, թե ինչպե՞ս և ի՞նչ եք վերահսկելու նախագիծ-առաջարկի իրականացման ընթացքում՝ ինչը և կերաշխավորի ձեր կողմից սահմանված խնդիրների և գործողությունների իրականացումը: Նկարագրել, թե ինչպե՞ս են ձեր կազմակերպության անդամները և ծրագրի արդյունքներից օգտվողները / շահառուներ/ ներգրավվելու մոնիտորինգի և գնահատման գործընթացներում: Գրեք վերահսկողությունը կազմակերպելու, խմբեր ձևավորելու ձեր սկզբունքները: Գրեք վերահսկողության արդյունքները ի նպաստ ծրագրի ընթացքի հոկմանը օգտագործելու ձեր մոտեցումները:

Նկարագրեք, թե ծրագրի ավարտից հետո ինչպե՞ս եք գնահատելու ծրագրի հիմնախնդրի լուծման, խնդիրների և նպատակի հաջողության աստիճանը:

Է. Ծրագրի շարունակականությունը

Նկարագրեք ինչպե՞ս եք տեսնում ծրագրի շարունակելիությունը սույն ֆինանսավորման ավարտից հետո: Պարտադիր չէ, որ բոլոր ծրագրերը լինեն շարունակական և երկարատև, սակայն եթե Ձեր ծրագրի իրականացումը մեծ խնդրի լուծման միայն մի փոքր մասն է, ապա տվեք գաղափարներ ծրագրի շարունակության վերաբերյալ:

Նկարագրեք թե ի՞նչ պլանավորված մեխանիզմներ և միջոցներ եք նախաձեռնելու ձեր ծրագրի կենսունակությունն ապահովելու համար, տալ հիմնավորումներ՝

Ֆինանսական

- Եթե ձեր առաջարկած Ծրագիրը հանդիսանում է համայնքի համալիր ծրագրի մի մասը, ապա ի՞նչ ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ Ծրագրի ավարտին՝ Ծրագրի վերջնական արդյունքը ստանալու, ապահովելու նպատակով,: Ի՞նչ ֆինանսական աղբյուրներ են առկա, կամ հասանելի այդ կարիքների համար:

Կազմակերպչական

- Ինչպե՞ս են կազմակերպվելու ծրագրի արդյունքների պահպանմանը, կամ զարգացմանը ուղղված աշխատանքները
- Ովքե՞ր են ղեկավարելու դրանք
- Ովքե՞ր են վերահսկելու
- Ի՞նչ տեղի կունենա, եթե ծրագրում ներգրավված որոշ անհատներ դուրս գան պրոցեսից

Ինստիտուցիոնալ

- Ստեղծվելու է արդյո՞ք որևէ կազմակերպություն, կամ խումբ, որը պատասխանատու կլինի ծրագրի արդյունքների պահպանման, կամ շահագործման պլանը իրագործելու նպատակով. եթե այո, ապա ինչպիսի՞ն է լինելու այդ կազմակերպության կամ խմբի կարգավիճակը (պաշտոնապես գրանցված, կամ այլ…)

*Պարտադիր չէ, որ ձեր Ծրագրի շարունակականությունը ապահովված լինի վերևում թվարկված բոլոր երեք մեխանիզմներով, սակայն կիրառվող **գեթե մեկ** մեխանիզմը պետք է լինի հստակ, համոզիչ և իրատեսական:*

IV. Բյուջե

Նախագիծ-առաջարկի արժեքի վերաբերյալ գոյություն ունի երկու բաժին՝ **Նախագիծ-առաջարկի բյուջեն** և **Բյուջեի նկարագիրը**

Ա. Նախագիծ-առաջարկի բյուջեն (1 էջ օգտագործելով կցված ձևը)

Խնդրում ենք օգտվել և ՁԵՌՎԵԼ ներկայացված բյուջեի ձևից:

Բ. Բյուջեի նկարագիրը (օգտագործեք կից ներկայայցված ձևաթուղթը)

Բառերով հստակ նկարագրեք հետևյալը:

- Նկարագրեք բյուջեի յուրաքանչյուր տողի (ծախսի) կապը նախագիծ-առաջարկի հետ և թե ի՞նչպես այն հաշվարկվել-գրեք հիմնավորումներ թե ինչպե՞ս եք հաշվել գրած թիվը և ինչու հեց այդքան, այլ ոչ ավել կամ պակաս:
- Նկարագրեք տարբեր աղբյուրներից ներդրումների ճիշտ ժամկետայնություն գրավականները և ֆինանսական հոսքերի տրամաբանական կապը նախատեսվող գործողությունների պլանի հետ:

V. Տեղեկատվություն Կազմակերպության վերաբերյալ

Նկարագրեք, թե ինչպես է ստեղծվել ձեր կազմակերպությունը: Ո՞րն է նրա դերը և նպատակը: Ինչքանով է ներկայացված նախագիծ-առաջարկը համահունչ կազմակերպության և համայնքի նպատակների հետ: Նկարագրեք ձեր կազմակերպության կառուցվածքը, ծրագրերը և փորձառությունը: Մանրամասն տեղեկատվություն տրամադրեք կազմակերպության անդամների, և նրանց փորձառության վերաբերյալ, տվեք նրանց կոնտակտային տվյալները: Նշեք այն գործունեությունները, որտեղ կազմակերպության անդամները ներգրավված են: Նշեք կազմակերպության փորձառության, ունեցած հաջողությունների մասին:

VI. Հավելվածներ

Անհրաժեշտության դեպքում կցեք ձեր ծրագրի հետ կապված այլ փաստաթղթեր և տեղեկություններ: